ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ «Էգնառ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրության հիման վրա 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ նախաձեռնել է «Էգնառ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էգնառ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էգնառ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/46 ընթացակարգի շրջանակներում 22.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր կարիքների համար բնակտարածություններ-ի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ. հայտարարել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Էգնառ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 29.01.2021թ. հայտերի բացման նիստում արձանագրել է, որ ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես հայտում բացակայում է հայտի ապահովումը: Վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու համար նույն օրը ընթացակարգը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

02.02.2021թ. գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «Էգնառ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Էգնառ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/46 ընթացակարգի շրջանակներում 22.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էգնառ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էգնառ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էգնառ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Էգնառ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էգնառ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Էգնառ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էգնառ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Էգնառ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը հայտով չի ներկայացրել հայտի ապահովումը և Կարգի 41-րդ կետի համաձայն սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշվածի հաշվառմամբ գտնում եմ, որ «Էգանռо» ՍՊԸ-ն «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ «Էգնառо» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էգնառо» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**